

**ՄՊԱՍՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ելնելով մարզի արդյունաբերության ներկա իրավիճակից, հեռանկարներից և հնարավորություններից, առաջիկա տարիներին մարզում արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները կհանդիսանան՝

- լեռնահանքային արդյունաբերությունը,
- էներգակիրների արտադրությունը
- մետալուրգիան,
- տեղեկատվական տեխնոլոգիաները,
- քիմիական արդյունաբերությունը,
- գյուղմթերքների վերամշակումը,
- թեթև արդյունաբերությունը,

**2014-2017 թվականներին կանխատեսվող ավելի քան 93 մլրդ դրամի ներդրումների շնորհիվ Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը արդեն 2014 թվականին կհասի 100.0 մլրդ դրամի սահմանագիծը, իսկ 2017 թվականին՝ կանխատեսվում է մոտ 150.0 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանքի ծավալ:**

*Արդյունաբերության ոլորտում կանխատեսվող ներդրումների բաշխումն ըստ տարիների և արտադրության ճյուղերի*

(միլիոն դրամ)

| Արդյունաբերության ճյուղը                | 2014թ.          | 2015թ.          | 2016թ.          | 2017թ.          | Ընդամենը 2014-2017թթ. |
|---|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------------|
| <b>Հանքագործական արդյունաբերություն</b> | <b>10,250.0</b> | <b>10,250.0</b> | <b>10,250.0</b> | <b>10,250.0</b> | <b>41,000.0</b>       |
| <b>Էներգետիկա</b>                       | <b>9,303.6</b>  | <b>9,303.7</b>  | <b>9,303.6</b>  | <b>9,303.6</b>  | <b>37,214.5</b>       |
| <b>Մշակող արդյունաբերություն, որից.</b> | <b>1,852.5</b>  | <b>1,969.2</b>  | <b>1,519.2</b>  | <b>1,519.2</b>  | <b>6,860.0</b>        |
| ✓ Մետալուրգիա                           | 102.5           | 102.5           | 102.5           | 102.5           | <b>102.5</b>          |
| ✓ Քիմիական արդյունաբերություն           | 1,300.0         | 1,300.0         | 1,300.0         | 1,300.0         | <b>5,200.0</b>        |
| ✓ Մեքենաշինություն-սարքաշինություն      | 450.0           | 450.0           |                 |                 | <b>900.0</b>          |
| ✓ Թեթև արդյունաբերություն               |                 | 116.6           | 116.7           | 116.7           | <b>350.0</b>          |
| <b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>       | <b>4,100.0</b>  | <b>4,100.0</b>  |                 |                 | <b>8,200.0</b>        |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԻԹՅՈՒՆ</b>                  | <b>25,506.1</b> | <b>25,622.8</b> | <b>21,072.8</b> | <b>21,072.8</b> | <b>93,274.5</b>       |

## Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտում մինչև 2018 թվականը նախատեսվում է կառուցել (լրացուցիչ կառուցապատել) և շահագործման հանձնել 13 ՓՀԷԿ: Ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 7,214.5 մլն դրամ, որի արդյունքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրության ծավալը կաճի 55.2 մլն կՎտժ-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ ավելի քան 900.0 մլն դրամով, կբացվեն մոտ 150 նոր աշխատատեղ: Նախատեսվում է նաև սկսել երկու խոշոր ՀԷԿ-երի («Շնող ՀԷԿ» և «ԼոռիԲերդ ՀԷԿ») շինարարությունը, մինչև 2018 թվականը կանխատեսվող ընդհանուր 30.0 մլրդ դրամ ներդրումներով: Ներկայումս մշակվում է նաև Լոռու մարզում հողմաէներգետիկայի հետագա զարգացման՝ նոր 20ՄՎտ հոգորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման ծրագիր:

### Տեղեկատվություն 2014-2017թթ. թվականներին կառուցելվելիք ՓՀԷԿ-երի վերաբերյալ

| h/h             | Շահագործվելիք ՓՀԷԿ-ի անվանումը | Շահագործ. մեկնարկի կանխատեսվող տարեթիվը          | Դրվածքային հզորությունը (կՎտ) | Տարեկան արտադրանքը (մլն կՎտժ) | Ներդրումների ծավալը (մլն դրամ) |
|-----------------|--------------------------------|--|-------------------------------|-------------------------------|--------------------------------|
| 1.              | Սահակյան ՓՀԷԿ-1                | 2014թ.   | 1,110.0                       | 4.4                           | 814.7                          |
| 2.              | Սահակյան ՓՀԷԿ-2                | 2014թ.   | 2,434.0                       | 10.0                          | 1,469.5                        |
| 3.              | Ձորագետ-5 ՓՀԷԿ                 | 2013-2014թթ.                                     | 2,120.0                       | 6.1                           | 1,087.4                        |
| 4.              | Ձորագետ-6 ՓՀԷԿ                 | 2013-2014թթ.                                     | 1,480.0                       | 4.8                           | 764.9                          |
| 5.              | Բազում ՓՀԷԿ                    | 2014թ.   | 542.0                         | 2.1                           | 292.4                          |
| 6.              | Ստեփանավան-1 ՓՀԷԿ              | 2015թ.   | 961.0                         | 4.4                           | 372.4                          |
| 7.              | Ստեփանավան-2 ՓՀԷԿ              | 2014թ.   | 545.0                         | 3.1                           | 246.6                          |
| 8.              | Սեդվի-1 ՓՀԷԿ                   | 2014թ.   | 313.0                         | 1.2                           | 514.5                          |
| 9.              | Սեդվի-2 ՓՀԷԿ                   | 2014թ.   | 698.0                         | 2.9                           | 310.4                          |
| 10.             | Կաճաճկուտ ՓՀԷԿ                 | 2014թ.   | 419.0                         | 2.3                           | 120.9                          |
| 11.             | Կարբի Ջրոս ՓՀԷԿ                | 2015թ.<br>(գործող ՓՀԷԿ,<br>հզորության ավելացում) | 1,000.0                       | 3.6                           | 271.7                          |
| 12.             | Սպիտակ ջուր ՓՀԷԿ               | 2014թ.   | 378.0                         | 2.98                          | 57.4                           |
| 13.             | Մարցիգետ-1 ՓՀԷԿ                | 2016թ.   | 1,890.0                       | 8.59                          | 911.0                          |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |                                |  | <b>13,890.0</b>               | <b>56.47</b>                  | <b>7,233.8</b>                 |

## **Լեռնահանքային արդյունաբերություն**

2010-2013 թվականներին լեռնահանքային արդյունաբերության ճյուղում իրականացված խոշոր ներդրումների արդյունքում մարզում առաջիկա չորս տարիներին կտրուկ կաճի հանքարդյունաբերության տեսակարար կշիռը՝ մոտ 7 անգամ կաճի ճյուղի արտադրության ծավալը, միայն պղնձի խտանյութի մասով, հասնելով տարեկան միջին 85.0 հազար տոննայի, դրամական արտահայտությամբ՝ ավելի քան 70.0 մլրդ դրամի:

## **Թեթև արդյունաբերություն**

Մշակող արդյունաբերության այս ճյուղն առաջատար ճյուղերից մեկն է մարզի արդյունաբերական ընդհանուր ներուժի մեջ և շատ կարևոր դեր է խաղում մարզում գործազրկության նվազման (հատկապես կանանց շրջանում) և զբաղվածության խնդրի լուծման հարցում: Դրանք բացառապես կարի արտադրական ձեռնարկություններ են: Այժմ Լոռու մարզում թեթև արդյունաբերության ճյուղը ներկայանում է միայն 6-7 կարի արտադրական ձեռնարկություններով, որոնց մեծ մասը տեղակայված է մարզկենտրոն Վանաձորում («Գլորիա գլխամասային ֆաբրիկա», «Սարտոն», «ԴավԳար» ՍՊԸ-ներ, «Բազում Ֆիրմա» ԱԿ և այլն): Պետք է նշել, որ կարի արտադրական ձեռնարկությունները հիմնականում պահպանել են իրենց արտադրական հզորությունները ապահովելով 1500-ից ավելի մարդու մշտական աշխատանքով:

Ներկայումս մարզի կարի արտադրական ձեռնարկություններն իրենց գումարային հզորությամբ կարող են արտադրել տարեկան 1.7-2.0 միլիոն հատ հազուստ՝ կախված մոդելների բարդությունից, ապահովելով շուրջ 4000 մարդու մշտական աշխատանքով: Սակայն այժմ թեթև արդյունաբերական ընկերություններն աշխատում են մոտ 15% հզորությամբ:

Վերջին 4-5 տարիներին ներդրումներ ոլորտում իրականացվել են միայն «Գլորիա գլխամասային կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ում՝ շենք-շինություններ և տեխնոլոգիական սարքավորանք ձեռք բերելու նպատակով:

## **Ներկայումս Լոռու մարզի կարի արտադրական ձեռնարկությունների հիմնական խնդիրը սպառման շուկաներ գտնելն է:**

Մշակող արդյունաբերության մեջ արտադրության ծավալների և որպես արդյունք տեսակարար կշռի զգալի աճ կարող են ապահովել նաև մեքենաշինության-սարքաշինության և սննդի արտադրության ենթաճյուղերը: Սննդի արդյունաբերության ենթաճյուղում մարզում գերակշռում է կաթի վերամշակման հատկապես պանրի արտադրությունը:

## **Մեքենաշինություն-սարքաշինություն**

Մեքենաշինության-սարքաշինության ենթաճյուղի ընկերությունները հիմնականում պահպանել են իրենց տեխնիկական-տեխնոլոգիական, նաև կադրային ներուժը, որի արդյունքում ենթաճյուղը ցույց է տվել կայուն աճի ցուցանիշներ: Սակայն ենթաճյուղի զարգացման հիմնական գրավականն այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն է: Նախորդ ՄԶԾ-ով ներկայացվել էր առաջարկություն մարզում, մասնավորապես Վանաձորում տեխնոպարկի ստեղծման գաղափարը: 2012 թվականին միայն ՀՀ կառավարությունն իր արտահանմանն ուղղված ռազմավարական ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցառումների շարքում ընգրկեց Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնի հիմնումը: Վանաձոր քաղաքի ընտրությունը պայմանավորված է մի շարք կարևորագույն հանգամանքներով, այն է՝ նախկին արդյունաբերական հզորությունների, տեխնոլոգիական զարգացման առկա ներուժի, համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքների, կրթական հաստատությունների և տեխնոլոգիական ավանդույթների առկայությունը:

Ըստ տարածաշրջանների մարզի արդյունաբերության անցած հինգ տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի արդյունաբերության հիմնական ճյուղերում կապիտալ ներդրումներն էական փոփոխություններ են առաջացնում տարածաշրջանների արդյունաբերական արտադրանքի ծավալի տեսակարար կշիռներում: Դրա վառ օրինակն է «Սագամար» ընկերության կողմից Ստեփանավանում Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի և լեռնահարստացուցիչ գործարանի շահագործման մեկնարկը՝ եթե Ստեփանավանի տարածաշրջանի արդյունաբերական արտադրանքի ծավալի տեսակարար կշիռը 2008թ-ին կազմել է 1.5%, ապա արդեն 2012թ-ին այն հասել է 8.4%-ի: Անցած հինգ տարիներին զգալի նվազել է Վանաձորի արդյունաբերության տեսակարար կշիռը՝ մոտ 6%-ով, որը պայմանավորված է մարզկենտրոնում քիմիական, թեթև արդյունաբերությունների, ինչպես նաև մեքենաշինության-սարքաշինության ճյուղերի ձեռնարկությունների կենտրոնացմամբ: Տեսակարար կշռի կայուն նվազում է արձանագրվել նաև Տաշիրի տարածաշրջանի դեպքում՝ ավելի քան 2 անգամ, որը նույնպես պայմանավորված է մեկ ճյուղի, տվյալ դեպքում կաթի վերամշակման ու կաթնամթերքի (պանրի) արտադրության կենտրոնացմամբ:

Առաջիկա 4 տարիներին, պայմանավորված «Թեղուտ» ՓԲԸ-ի գործարկմամբ, էլ ավելի կմեծանա Թումանյանի տարածաշրջանի արդյունաբերության տեսակարար կշիռը: Մարզի տարածաշրջանների արդյունաբերության հզորությունների համաչափ զարգացում 2014-2017 թվականներին չի կանխատեսվում: